ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔ

ք. Սիսիան **19/02/2025**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 02
ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 18 անդամներ:

Բացակա էին՝ Արմենակ Միրզախանյանը, Կարինե Աբելյանը, Հասմիկ Ազոյանը

Ավագանու նիստին մասնակցում էին՝

Հրանտ Արշակյանը, Դավիթ Այվազյանը, Կորյուն Մուրադյանը, Նարա Հովհաննիսյանը, Վարդան Մանուչարյանը, Քրիստինե Ներսիսյանը, Արմեն Խաչատրյանը

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Հովսեփ Առաքելյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Կարեն Իվանյանը

Ավագանու նիստն իրավազոր էր, և այն հայտարարվեց բացված:

Նիստն ուղիղ հեռարձակվում էր:

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 19-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՀՈՎՍԵՓ ԱՌԱՔԵԼՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 65-րդ հոդվածով.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու 2025 թվականի փետրվարի 19-ի արտահերթ նիստի օրակարգը.
   1) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 124-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին.
   2) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու անդամ Ջիվան Արսենի Մարգարյանի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին.

3) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու անդամ Դավիթ Ռուշանի Դավթյանի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին.
4) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու անդամ Գևորգ Սեյրանի Դավթյանի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամ Ջ. Մարգարյանը հարցրեց, արդյո՞ք նախագիծը չպետք է ստորագրեն, որոշմանը համար դրվի:
Հ. Առաքելյանը պատասխանեց, որ նախագիծը չի ստորագրվում, իսկ աշխատակազմի քարտուղար Կ. Իվանյանը ավելացրեց, որ նախագիծը երբ դառնում է որոշում ստորագրվում և համարակալվում է:
Հ. Հակոբյանը առաջարկեց օրակարգից հանել վերջին 3 հարցերը և նախորդ նիստի ժամանակ ներկայացրած հարցերը: Դա խտրական վերաբերմունք է ավագանու անդամների նկատմամբ, որովհետև կոչ եք արել համախմբվածության, համերաշխության: Օրենքը ասում է կարող է նաև լիազորությունները դադարի որոշ պայմաններում: Դուք չեք օգտագործել «կարող է» բառը, ավագանու անդամներին չեք կանչել զրուցել, բացատրել, քննարկել, միանգամից դադարեցնում եք:
Համայնքի ղեկավարը պատասխանեց, որ ի սկզբանե կոչ է արել համախմբվել և աշխատել, բայց նիստերին չեք մասնակցել:
Մյուս հարցը առաջարկեց. այն որոշումները, որ ավագանին կայացնում է, այդ որոշումները հավանություն արժանացնել է, որովհետև բոլոր ընթացակարգերը խախտումով է ընդունված: Խնդրեց առաջարկը դնել քվեարկության:

Կողմ-5 Դեմ-13 Ձեռնպահ-0

Առաջարկը չընդունվեց:

Օրակարգը դրվեց քվեարկության:

Կողմ-13 Դեմ-5 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 023-Ա)*

Դեմ քվեարկեցին ավագանու անդամներ Ջ. Մարգարյանը, Դ. Դավթյանը, Գ. Դավթյանը. Լ. Բաբայանը և Հ. Հակոբյանը:

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի ԹԻՎ 124-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԴԱՎԻԹ ԱՅՎԱԶՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և 83-րդ հոդվածի 2-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով ու «Հայաստանի Հանրապետության բյուջետային

համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասով և նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը.

Սիսիան համայնքի ավագանին որոշում է՝

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 20-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի 2024 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 124-Ն որոշման մեջ կատարել փոփոխություններ և որոշման 1-ին կետի հավելվածում կատարել փոփոխություններ՝ համաձայն 1-ից 3 հատվածների:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Ֆինանսատնտեսական բաժնի պետ Դ. Այվազյանը հիմնավորեց բյուջեում նախատեսվող փոփոխությունները:

Ավագանու անդամ Հ. Հակոբյանը հեռացավ դահլիճից:

Որոշման նախագիծը դրվեց քվեարկության:

Կողմ-17 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 024-Ն)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄ ՋԻՎԱՆ ԱՐՍԵՆԻ ՄԱՐԳԱՐՅԱՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՀՈՎՍԵՓ ԱՌԱՔԵԼՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով և 70-րդ հոդվածի 2-րդ մասով ու նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը.

Սիսիան համայնքի ավագանին որոշում է՝

1. Վաղաժամկետ դադարեցնել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու անդամ Ջիվան Արսենի Մարգարյանի լիազորությունները:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ելույթ ունեցավ Ջ. Մարգարյանը և հարցրեց, թե ինչով են խանգարում, որ ուզում են ազատվել: Դիմելով համայնքի ղեկավարին ելույթում նշեց, որ ձևավորված խմբակցության համայնքի ղեկավարի շարունակությունն է: 2024 թվականին հաստատվել է համայնքի ավագանու նոր կանոնակարգը, որտեղ նշված է, որ նորընտիր համայնքի ղեկավարը իր լիազորությունների ստանձնման օրից հետո 5-օրյա ժամկետում առաջարկում է վերանայել հանձնաժողովները: Գրավոր բողոք է ներկայացրել և մինչ այսօր պատասխան չեն ստացել, դրա համար հանձնաժողովի նիստերին չի մասնակցել:
Ելույթի ավարտից հետո եղան քննարկումներ, հարց ու պատասխաններ:
Որոշման նախագիծը դրվեց քվեարկության:

Կողմ-13 Դեմ-4 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 025-Ա)*

Դեմ քվեարկեցին ավագանու անդամներ Ջ. Մարգարյանը, Դ. Դավթյանը, Գ. Դավթյանը և Լ. Բաբայանը:

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄ ԴԱՎԻԹ ՌՈՒՇԱՆԻ ԴԱՎԹՅԱՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿ. ՀՈՎՍԵՓ ԱՌԱՔԵԼՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով և 70-րդ հոդվածի 2-րդ մասով ու նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը.

Սիսիան համայնքի ավագանին որոշում է՝

1. Վաղաժամկետ դադարեցնել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու անդամ Դավիթ Ռուշանի Դավթյանի լիազորությունները:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ-13 Դեմ-4 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 026-Ա)*

Դեմ քվեարկեցին ավագանու անդամներ Ջ. Մարգարյանը, Դ. Դավթյանը, Գ. Դավթյանը և Լ. Բաբայանը:

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄ ԳԵՎՈՐԳ ՍԵՅՐԱՆԻ ԴԱՎԹՅԱՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿ. ՀՈՎՍԵՓ ԱՌԱՔԵԼՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով և 70-րդ հոդվածի 2-րդ մասով ու նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը.

Սիսիան համայնքի ավագանին որոշում է՝

1. Վաղաժամկետ դադարեցնել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու անդամ Գևորգ Սեյրանի Դավթյանի լիազորությունները:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ-13 Դեմ-4 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 027-Ա)*

Դեմ քվեարկեցին ավագանու անդամներ Ջ. Մարգարյանը, Դ. Դավթյանը, Գ. Դավթյանը և Լ. Բաբայանը:

Նիստի օրակարգային հարցերը սպառվեցին:

Ավագանու անդամներ

ՀՈՎՍԵՓ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՆԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԱՇՈՏ ԱՂԱՋԱՆՅԱՆ

ԱՆԱՀԻՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԲԵԼԼԱ ԹԱՄՐԱԶՈՎԱ

ՀՐԱՉՅԱ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ԳԵՎՈՐԳ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՆԱԽՇՈՒՆ ՅԱԶՈՒԼՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ՀՈՎՍԵՓՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ԱՆԱՀԻՏ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՋԻՎԱՆ ՄԱՐԳԱՐՅԱՆ

ԴԱՎԻԹ ԴԱՎԹՅԱՆ

ԳԵՎՈՐԳ ԴԱՎԹՅԱՆ

ԼՈՒՍԻՆԵ ԲԱԲԱՅԱՆ

ՄԻՇԻԿ ՂԱՋԱՐՅԱՆ

ՀԱՅԿ ՀԱԿՈԲՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՈՎՍԵՓ ԱՌԱՔԵԼՅԱՆ_____

Նիստն արձանագրեց՝ Կարեն Իվանյանը _____